

ՊՐՈՓ. Ն. ՄԵԼԻՏ ՎԵՐՁԻՆ ԴԻՏՆԱԿԱՆ ՈՒ- ՂԵՒՌՈՒԹԵԸՆ ԱՐԴԻՒԽՆՔԸ

Նորերս լիս տեսաւ անխոնջ գիտնական Մառի դէպի
Սինայ և Երուսաղէմ կատարած ուսումնական ուղևորութեան
համառօտ նկարագիրն՝ ու Հաշիւը¹⁾, որ բաւականին հետաքրքրա-
կան ձեռագրական նորութիւններ է պարունակում նաև Հայոց
հին գրականութեան վերաբերյամբ:

Պրոֆ. Մառի այս գիտնական ուղևորութեան – որ եօթ և
կէս ամիս է տևել – նպատակն է եղել ուսումնասիրել Սինայի
և Երուսաղէմի ձեռագիրների ճոխ ժողովածուները: Երուսաղէ-
մի սուրբ Յակոբի վանքի Հայոց պատրիարքական մատենադա-
րանի գոներն ևս լայն բացւում են յարգելի Հայագէտի առաջ
և սրբազն Խապայեան եպիսկոպոսի (այժմ ԱԵՀափառ կաթոռ-
ղիկոս Տանն Կիլիկիյ) կազմած ձեռագիրների մանրամասն ցու-
ցակի պատրաստի մասն ևս նրա տրամադրութեան ներքյ, և
դրում: Սինայի սր. Կատարինէի մատենադարանում Հայերէն
ձեռագրներ չի գտել Մառը, բացի Դաւիթ Անյաղթի Հեղինա-
կութիւնից. Վերջինս էլ վրացերէն ձեռագրների մէջ է եղել:
Մառը ենթադրում է՝ թէ գուցէ նկուղներում կամ խորանում
պահուած են մացել Հայերէն ձեռագիրները:

Ես ուղեկորութեան գիտնական արդիւնքով պրօֆ. Մառը
աշխատում է նոր լիս սփռել Հայ-Վրացական նախնական յա-
րաբերութիւնների վրայ. բրիստոնէական գրականութեան հնա-
գյն շրջանը Հայաստանում և Արաստանում ընորոշում է Հայոց
և Վրաց եկեղեցական-գրականական աւանդութիւնների ընդ-
հանրութեամբ: Ես ընդհանուր աւանդութիւնների հիմնական
գիծն այն է, որ երկուսն էլ սկիզբն են առնում ասորական

1) Предварительный отчетъ а работахъ на Санаѣ, введенныхъ въ сотрудничествѣ съ И. А. Джаваховыимъ, и въ Йерусалимѣ, въ поѣздку 1902 г. (апрѣль—ноябрь).

սկզբնական աղբիւրից «Via agemnias», այսինքն վրացիք ստանում են հայերի միջնորդութեամբ. Պրօֆ. Մառի կարծիքով հայերի և վրացիների սերտ հաղորդակցութիւնը՝ իրենց գրականական գործունէութեան հենց սկզբում շատ մեծ կարեորութիւն ունի յօդուտ տեղական բրիստոնէութեան, բայց դրանշանակութիւնը գեռ լիովին չէ գնահատում եցանկութիւն չկայ պարզ պատկերացնելու՝ թէ ի՞նչ անփոխարինելի վէնք կարող է լինել այդ ուսումնասիրութիւնը Հայաստանի և Վրաստանի բրիստոնէական բաղաբակրթութեան հնագոյն պատմութեան համար, այն պատմութեան, որ թաղուել է յետագայ ժամանակների աղգայնական առասպելների մէջ:

Վրաց եկեղեցին աւելի ուշ ժամանակներում ևս պահպանել է մի քանի չին կարգեր և տերմիններ հայ-վրացական միութեան ժամանակաշրջանից. դրանցից շատերն արմատացել են վրաց ժողովրդի մէջ միութեան ժամանակներում. այսպէս օրինակ հին-վրացական եկեղեցին ընդունել էր զոհարերութեան սովորութիւնը. զոհում էին գառը, հորթ և ուրիշ կենդանիներ Սինայում պահուած մի քանի վրացերէն ծիսարաններում (Ճաշտոցներ) պրօֆ. Մառը գտել է զոհարերութեան ծիսին վերաբերեալ հետաքրքրական աղօթքներ և հին կտակարանի ընթերցուածների ընտրութիւններ. Հայ ժողովուրդը և հայոց եկեղեցին ցայսօր պահպանել են ըմատաղի» սովորութիւնը, սակայն տարարադարար. այժմեան մեր ծիսարաններն այնքան հին ժամանակների ձեռազբներ չեն, որչափ վրաց ծիսարանները. Մատաղի սովորութեան համար յունաց և նոյն իսկ վրաց եկեղեցին-հայ եկեղեցուց բաժանուելուց յետոյ-իիստ յանդիմանութիւնների են ենթարկել հայոց եկեղեցին. Պրօֆ. Մառը երուսաղմում օրինակում է Սահակ վարդապետի (?) բացատրութիւնը յատաղի խնդրին վերաբերեալ. այդ բացատրութեան մէջ հեղինակը զոհարերութեան սովորութիւնը կապում է այն եկեղեցական ընդհանուր ժողովների որոշումների հետ, որ վերաբերում են ազագուներին:

Յոյները, ապա դրանց հետեւելով և վրացիք, իիստ պարսաւում էին հայերին առաջաւորաց պահքի համար, անուանելով այդ սովորութիւնը «գարշելի». այժմ Մառը գտել է, որ հին-վրաց եկեղեցին ևս ունեցել է առաջաւորաց պահքը. «Առաջաւոր» տերմինը գտնուել է նաև Սինայում եղած վրաց ձեռագիր Յայսմաւուրքի մէջ. Երուսաղէմում Մառը գտել է երեք

Հայերէն յիշատակարան այս պահըի բացատրութեան վերաբեր-
մամբ, որոնցից մէկը՝ որ ըստ վկայութեան ձեռազրի, Վանական
վարդապետինն է, և ամբողջովին օրինակել է.

Եղրասի անվաւերական գրքի Հայերէն թարգմանութիւնը-
համարում էր ուշ ժամանակների արդիւնք, որովհետև մինչեւ
այժմ պատահում էր միայն XV—XVII դարերում օրինակուած
աստուածաշունչների մէջ. այժմ գտնուել է այդ գրքի XII-րդ
դարում արտագրուած վրացերէն թարգմանութիւնը, որի մէջ
պահպանուել է Հին Հայկական վերսիան. Մառի ենթադրու-
թեամբ վրացերէն թարգմանութիւնը VII դարեց ուշ չէր կա-
րող լինել, բայց կարող է պատահել, որ աւելի հին լինի.

Մառը զննել է նաև Եղրասի երկու կանոնական գրքերը-
վրացերէն և դրանցից մէկը համեմատելով Հայերէն, ասորական,
յունական և երրայսական բնագիրների հետ՝ զաել է, որ վրա-
ցերէնը տառացի կերպով նշյնն է, ինչ որ Հայերէն սովորական
տպագրուածը Առհասարակ ընդունուած է այն Հայեացքը, որ
սուրբ գրքի Հայերէն թարգմանութիւնը տեղի է ունեցել յու-
նարէն եօթանասնից զրբից. պրօֆ. Մառը չէ ընդունում այս
կարծիքը, ասելով որ XII-րդ դարում օրինակուած վրացերէնը-
Հայերէնի հետ միասին մի վերսիայի են պատկանում և իիստ
տարբերում են յունարէն եօթանասնից թարգմանութիւնից.

Երուսաղէմի յատենադարանում Մառը գտնում է Ներ-
սէս մեծի կեանքի այն ձեռագիր բնագիրը, որի հին-վրացե-
րէն թարգմանութիւնն առաջուց գտել էր Աթօնի յատենադա-
րանում. այս բնագիրը հետաքրքրական է նրանով, ասում է
յարգելի զիտականը, որ Մովսէս Խորենացին օգտուել է դրա-
նից՝ Հայոց պատմութիւնը զրելիս Մառը դարձեալ մի քանի-
համեմատութիւններ առաջ բերելով Հայերէն և վրացերէն ձե-
ռագրներէց, շարունակում է, որ Հայոց և վրաց միութեան
ժամանակշրջանի այս բալոր յիշատակարանները. յանաւանդ
վրաց մասը, ցոյց են տալիս Հայաստանի և Վրաստանի գրա-
կանական հաղորդակղութեան սերտ յարաբերութիւնը. Այս
հնագոյն վրացերէն բնագիրները կամ թարգմանութիւններ են
Հայերէնից կամ յաճենայն գէպս գրուած են Հայոց լեզուի-
աղդեցութեան ներքյա, Սինայում և Երուսաղէմում գտնուած
յիշատակարանների հետազոտութիւններով Հաւաքուած լեզուա-
րանական նիւթերը ճսիսացնում են Հայերէնից առնուած վրա-
ցերէն բառերի ժողովածուն և հետաքրքրական ու շատ կարևոր.

դիտողութիւններ են առաջացնում հայոց գրականութեան պատմութեան համար Արացական փոխառութիւնները, որ տեղի են ունեցել հայերէնից անվիճելի կերպով զրականութեան միջոցով, իրենց ֆօնետիկական և բառական կազմութեամբ լըրջօրէն հերթական են դարձնում այն ինդիրը՝ թէ արդեօք ինչով էր տարրերում հայոց գրականութեան հնագյն շրջանի լեղուն, որից մինչև այժմ չէ գտնուել հայերէն որևէ է ձեռագիր, բայց որին պատկանում են հետղչետէ աւելի շատացող վրացերէն թարգմանութիւններ հայերէնից, Արդեօք այն շրջանի հայերէնը միայն իւր հնութեամբ էր տարրերում մեզ յայտնի հնագյն ձեռագրների հայերէնից, թէ նաև բարբառի առանձնայատկութիւններով, ինչպէս որ կարելի է ենթադրել վրացերէն ձեռագրների մեջ զանուած փաստերից, Արդեօք հին հայկական սկզբնական գրականական լեզուն առանձին բարբառ չէ և արդեօք երկրորդ թարգմանիչները չփախեցին նաև հայերէն բնագիրների բարբառը:

Հայոց մատենագիրները երկրորդ թարգմանիչներ ասելով հասկանում են սուրբ զիրքը յունարէն բնագրով սրբագրովներին, այժմ պլոֆ. Մառը, հիմնուելով հայոց մատենագրութեան ուսումնասիրութեան հետևանքների վրայ, կարծիք է յայտնում, որ երկրորդ թարգմանչական գործունէութիւնը պէտք է ընդարձակ մտքով հրաւանալ և «պատմական» գրուածքների վերաբերմամբ էլ նոյնն ասել, Շատ հետաքրքրական ինդիր է այս և ցանկալի, որ յարգելի գիտնականն աւելի մանրամասն զբաղուի և փաստեր ժողովէ իւր ենթադրութիւնը հիմնական դարձնելու նաև մեզ համար:

Միութեան ժամանակաշրջանից, որ առաջացել էր ասորի ների առաքելական գործունէութեան շնորհիւ, յետոյ թէ Հայաստանում և թէ Արաստանում գրականութիւնը նոր ուղիով է առաջ ընթանում, այն է, դրանցից իւրաքանչիւրն առանձին շաւով է զարգանում, թէև երկուսն էլ յունական ազդեցութեան ներքյ. Յունաց եկեղեցին ձգտում էր իւր իշխանութիւնն ընդարձակել գեպի արեւելք և յետ մղել ասորոց եկեղեցու ազդեցութիւնն, որ տարածուել էր Հայաստանում և Արաստանում. Յոյն եկեղեցու շահերի տեսակետից է գրուած այն յիշաստակարանը, որի արաբերէն թարգմանութիւնը պահուել է Սիսայի մատենադարանում Հայերի բրիստոնէութիւն ընդունելու պատմութիւնն է այդ և արաբերէն է թարգմա-

Նուած յունարէնից. վաղուց արդէն ապացուցուած է, որ ցայժմ պահուած յունարէն բնագիրը Ագաթանգեղոսի պատմութեան թարգմանութիւնն է. իսկ Ագաթանգեղոսի պատմութիւնն աւելի ուշ ժամանակի մշակումն է Հայոց ազդայնական ոգուով. Այս պատմութեան սկզբնական ձևը (վերսիան) պահպանել է պրօֆ. Մառի սյժմ երեան բերած արարերէն թարգմանութիւնը. Մառը ամրողովին լուսանկարել է այս հետաքրքրական ու կարևոր ձեռագիրը, որի սկիզբը տարաբաղդարար պակաս է. Եօթանասուն էջից բաղկացած այս ձեռագիրն էլ բաւական է. ըստ Մառի, որ նոր լոյս սփռուի ո՛չ թէ միայն Ագաթանգեղոսի Հայերէն վերսիայի զրական բննադատութեան ապամարգարակըրթական հարցի վրայ. Արարական բնագիրը պահել է Հայկական վերսիայի բոլոր մոմենտները, բայց մեծ քանակութեամբ իրական մանրամասնութիւններով. Արարական վերսիան թէկ հայ. կականից բաւականին փոքր է, բայց այդ կարելի է բացատրել Հայկականի հուսորական ոճով.

Արարական վերսիայի ոճի բնաւորութիւնը ցոյց տալու համար պրօֆ. Մառն առաջ է բերում մի քանի հատուածներ, որոնք բովանդակութեամբ հետաքրքրական են, որովհետև չկան մեր Ագաթանգեղոսի պատմութեան մէջ. Աչա' այդ կարելի է բացատրել Հայկականի հուսորական ոճով.

Կեսարիայից վերադառնալիս Գրիգոր Լուսաւորիչը մըստնում է Սեբաստիա, որտեղ և մնում է վեց օր։ Ապա ուշեառ բուելով դէպի իւր երկիրը Սուլը Գրիգորը վերցրեց Սեբաստիայից քահանաներ և արեղաներ, որպէս զի նրանց Հայատանի եկեղեցիներում քահանաներ նշանակէ. Գրիգորն իւր մօտն ունէր Ղեծնդիս Պատրիարքի զրած նամակը Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսին ուղղուած, որպէս զի վերջինս էլ նրա հետ գնալով՝ գահի վրայ նստեցնէ Գրիգորին եկեղեցական կանոնների համաձյն։

Երբ Տրդատ արքան դիմաւորում է սուրբ Գրիգորին, իւր հետ վերցնում է ո՛չ միայն Աշխէն թագուչուն և Խոսրովադուխաքրոջը, ինչպէս ասած է Ագաթանգեղոսի Հայերէն պատմութեան մէջ, այլ և «Արաստանի թագաւորին և Ռշտունեաց թագաւորին» (որ արարական թարգմանութեան մէջ դարձել է ըուաների թագաւոր) և ալանաց թագաւորին, իւր «իշխաններին, մեծամեծներին և ցեղերի առաջնորդներին» եւ գրանք դի-

մաւրեցին սուրբ Գրիգորին, ողջունեցին նրան, նշյնպէս և Պետրոս եպիսկոպոսին» (Սերաստիայի)։

Սուրբ Գրիգորն «սկսեց օծել եկեղեցիները և քահանաներ նշանակել նրանց, որոնք գիտէին սուրբ զիրքը, մի քանիսին ուղարկեց Արաստան, ումանց Արթաղիա, ումանց էլ ալանների մոտ»։

Սր. Գրիգորը նախ վերցնում է նրանց, որոնք ծառայում էին մեչեաններում և ուսուցանում է նրանց սր. գիրքը։ Սր. Գրիգորն ինքը ամբողջ Հայաստանի կամողիկոսը դառնալով պատրաստում է եպիսկոպոսներ և ուղարկում Հայոց աշխարհի տմն կողմերը, նաև Արաստան, բազիկների (կամ գուցէ Դերջան) աշխարհը և ալանների մօտ, նա Սերաստիայի եկեղեցուց վերցնում է և մի վրացի Աբերբ-Ղ-Խ-վա անունով, ձեռնադրում է նրան մետրապօլիս և ուղարկում Արաստան, որ նա ամբողջ Արաստանում եպիսկոպոսներ կարգէ։ Նա առաքինի վարքի տէր էր, եաղաղ, գիտակ եկեղեցական գրքերի նա սարկաւագ և ականատես էր, երբ բաց արին քառասուն մարտիրոսների մասունքները, նա ալեզարդ էր և այդ պատճառով սր. Գրիգորը նրան բարձրացրեց այդ աստիճանին։ Արթաղիա ուղարկեց նա (սր. Գրիգորը) Սօֆրոնիային, որ քահանայ էր Կապադովկիայից, Վերջինս սր. Գրիգորի հետն էր, և եպիսկոպոս ձեռնադրելով ուղարկեց։ Ալանաց Երկերն ուղարկեց Թովմային, գերազանց մարդուն, որ Սատարունա քաղաքիցն էր։

Սր. Գրիգորի Հայաստանի զանազան գաւառներն ուղարկած հովիւների անունները կան նաև Հայկական վերսիայի մէջ, բայց այդ ցանկից հեռացրած կամ փոփօթած են մի քանի էական մանրամասնութիւններ. պյսպէս օրինակ՝ ըստ Հայկական վերսիայի՝ բոլը հովիւներն, ըստ Երևանիթին, հայ քրմերի որդիքին էին. սր. Գրիգորը դաստիարակեց քրմերի որդողը և նրանցից արժանաւորներին եպիսկոպոս ձեռնադրեց։ Յետոյ անունները թուելիս Հայկական բնագիրը կարծես միւնցին Ալբիան եպիսկոպոսին անուանում է Երկու տեղ. նախ Հենց սկզբումը առաջինի (եպիսկոպոսի) անունն էր Ալբիան, որ յետոյ Եփրատ գետի շուրջն եղող գաւառների եպիսկոպոսն եղաւ։ Երկրորդ՝ անունների վերջը. «Ալբիանին, Ճշմարիտ և աստուածաւում մարդուն, (Գրիգորը) արքայական պալատի բանակի եպիսկոպոս թողեղ, իսկ ինքը ժամանակ առ ժամանակ գնում էր լեռները»։

Արաբական թարգմանութեան մէջ ևս երկու անդամ է յիշուած Ալրիանը, բայց պարզ կերպով երկու տարրեր Ալրիանների մասին է խօսքը: Սկզբում առուած է, սուրբ Գրիգորն ռուղարիեց Ալրիանին Բագրեանդ քաղաքը և Եփրատի ափերում ապրող բոլոր բնակիչների մօտ, որոնք առաջ երկրպագում էին կուրքերին և նա բոլորին դարձրեց գէպի Աստուած, որովհետեւ նա (Ալրիանը) արժանի էր, որ նստէր աշակերտների (Քրիստոսի) գահի վրայ»: Յետոյ, ո՛չ թէ անունների ցանկի վերջը, ինչպէս որ է Հայկական վերսիստամ, այլ ութերորդ տեղը, և այն էլ փոփոխուած կերպով, որ գուցէ և պատահական լինի. «Եւ ուղարկեց (սուրբ Գրիգորը) Ալրիի եպիսկոպոսին սպարապետի աշխարհը, Մամիկոնեանի աշխարհը, որ (այսինքն սպարապետը) թագաւորի զալստականներից էր և զօրքի գլխաւորը. Եւ նա գնաց նրանց գլխաւորի (Մամիկոնեանի) հետ, որի անունն էր Պատրիկ: Եւ երանելի Գրիգորը ճշմարտապէս հրամայեց եպիսկոպոս Ալրիին և ասաց նրան. «Ճամանուես Պատրիկից և լցրու նրա աշխարհը բարողով»: Եւ այդ նրա համար, որ եպիսկոպոսը (Ալրին) զանազան իմաստութիւնների տէր էր՝ թէ հռովմէական և թէ կուպագատական. նա զօրեղ էր սուրբ Գրիգի բացարութեան գործում և նրա իշխանութեան ներքյ էին Տարօնը և Բասուռնը:

Արաբական թարգմանութեան մէկ հատուածը արդարացնում է Մ. Խորենացու Ա գրքի 83-րդ գլու. մէջ յիշուած և Ագաթանգեղոսին վերագրուած կտորը, որ չկար Հայկական Ագաթանգեղոսի պատմութեան մէջ և դիանական քննադատները Մ. Խորենացուն մեղադրելով մտացածին վկայութիւններ բերելու համար, այդ հատուածն էլ ապացոյցներից մէկն էին համարուած:

Ըստ պրօֆ. Մասի, Ագաթանգեղոսի արաբական թարգմանութեան հիմնական նշանակութիւնն այն է, որ նրա մէջ սուրբ Գրիգորն առանց թերարանութիւնների նկարագրուած է իրեւ յունական և մասնաւորապէս կապադովկիական եկեղեցու առաքեալ-գործից: Կապադովկիապում նա ոչ թէ միայն ճեռնադրուում է եպիսկոպոս, այլ և պատեղից է վերցնուում իր գործակիցներին. նա ներկայանում է իրը Լուսաւորիչ և յունական եկեղեցու կազմակերպիչ ո՛չ միայն Հայաստանում, այլ և գրադի երկրներում—Աքսովիայում, Վրաստանում, ալանների մէջ և այլն. մէկ խօսքով այն բոլոր աշխարհներում, որտեղյունական եկեղեցին կա-

բողացաւ արմատ ձգել կամ թէ ուր որ կամենում եր տարածել իւր ազդեցութիւնը:

Երբ Հայաստանում տեղի է ունենում յունական և ասուրական եկեղեցիների հոսանքների միախառնութիւնը, յունական առասպելը (լեզենդան) թարգմանուում է հայերէնի և յետոյ մշակուում հայոց ազդայնական հոգով. — այս է աչա Ագաթանգեղափառի պատմութիւնը ըստ Մաոի¹⁾:

Մի ժամանակ վրաց գրականութեան մէջ ևս արծարծւում է սուրբ Գրիգորի անունն իրբւ Արաստանի հովուապետ. բնորոշ է այդ տեսակէտից Սինայի վրայ գտնուած հին ձեռագիր մի երգասացութիւնն ի պատիւ Հայաստանի Լուսաւորչի, որտեղ Արաստանն անուանուած է Գրիգորի հօտ: Այս երգասացութիւնն, որ Հետաքրքրական է և ուրիշ կողմերով, հայկական ծագումն ունի. այստեղից պրօֆ. Մաոն եղրակացնում է. «Կարելի է կարծել, որ յունական ազդեցութիւնն սկզբում հայերից և վրացիներից ընդունուում էր միասին, երբ դրանց եկեղեցական-գրականական միութիւնը դեռ ևս լիովին գյոււթիւն ունէր. Յօդու այս հանգամանքի կարելի է բացատրել դարձեալ մի ուրիշ փաստ, որ նոյնպէս բացատրուեց մեր ուղևորութեան միջցին ձեռք բերուած նիւթերով. Պարզուեց, որ սուրբ գրքի հայերէն ու վրացերէն թարգմանութիւնները մի քանի ընդհանուուր ինքնուրոյն գ' եր ունին, որոնք յունական ծագումն ունին և առաջացել են Խօթանասնից թարգմանութեան հետ համեմատելու ժամանակ յունարէն հատուածների սխալ հասկացողութիւնից»:

Պ. Մաուը հիմնուելով Սինայի յատենադարանում ժողոված նիւթերի վրայ, հետևեալ եղրակացութեան է գալիս հայկական և վրացական սկզբնական եկեղեցիների վերաբերմամբ. «Հայոց եկեղեցում գերակշունց ասորական հոսանքը, իսկ վրաց եկեղեցում յունականը. բայց այդ չ' նշանակում՝ թէ առաջին դէպրում յաղթանակն ասորոցն էր, երկրորդ դէպրում յոյնե-

¹⁾ Նորերո լոյս է տեսել առւրը Գրիգորի վարուց պատմութեան նթովպական վերսիան, որի թարգմանութիւնը հրատարակիլ վերադրում է XIV-րդ դարին: Նթովպականը թարգմանուած է արաբերէնից. իսկ արաբականը յունարէնից. եթովպականը թարգմանուած է կրճատուած արաբերէնից: Տես Vide de S Gregorio, patriarcha da Armenia conversao dos Armenios aos christianismo versao ethiopica publicada por Francisco Maria Esteves Pereira.

րինը. Յաղթանակը երկու տեղական եկեղեղիներինն էր և դրանցից իւրաքանչիւրի ինքնուրոյն զարգացման զրաւականը. Այդ ժամանակից սկսած թէ հայկական և թէ վրաց եկեղեցիները նշանաւոր եռանդ են արտայայտել, իւրաքանչիւրն անկախ, իւր զարգացման համար. Միջոցներից մեկն էր անմիջապէս բնադիրներից թարգմանելը, առաւելապէս յունարէնից:

Ազգային տարրի երևան գալն աւելի ստուարացնում է յօւնարէնից կատարուած թարգմանութիւնների. Թիւը, բայց այնուամենայնիւ այդ թարգմանութիւնները և դրանց ընտրութիւնները տեղի են ունենում ազգային հոգով. դաւանաբանական ու եկեղեցական ինդիբների հետի միասին առաջ եկան նաև ազգային ինդիբներ, որոնք ուղղութիւն տուին տեղական ազգային զրականութեան և ստեղծեցին հայկական և վրացականութեան ազգային ժամանակաշրջանը. Այս շրջանում երկու գրացի ազգերի զրականութիւններն էլ իրարից բոլորովին տարբեր ուղղութեամբ են առաջ գնում, երբեմն միմանց թշնամարար վերաբերուող ազգային շահերով.

Մեր զրականութեան պահ շրջանից ևս մի քանի հատուկոր նորութիւններ է գտել պրօֆ. Մառը նա յշխ է ունենացել գանել Հապուհ. Բազրատունու, իններորդ գարի պատմաբանի կորած աշխատութիւնը, որի գոյութիւնը ենթադրում էր երուսաղէմի մի ձեռագրի մէջ. և իսկապէս գտնում է այդ ձեռագրի մէջ մի քաղուածք Հապուհի աշխատութիւնից, բայց ո՛չ պատմական բովանդակութեամբ և, ինչպէս որ սպասում էր, թէև հատուածի վերնագրի մէջ ասուած է, որ քաղուածքն արուած է Հապուհի պատմութիւնից:

Այնուամենայնիւ այդ հատուածը պրօֆ. Մառը գտնում է հետաքրքրական Հայաստանի եկեղեցական կարգերի պատմութեան, մանաւանդ պահը վերաբերմամբ.

Բովանդակութեամբ հետաքրքրական են հանդիսանում նաև Երուսաղէմի Հայոց մատենադարանում գտնուած սուլը Նունէի վարքագրութիւնը և սուրբ Նունէի խաչի պատմութիւնը. վերջինս կազմել է Աշարօն Վանանդեղին՝ Հայոց և վրաց աղբեւրներով, ինչպէս որ վկայում է ինքը Վանանդեցին: Վանանդեցին հայկական աղբիւրների շարքում յիշում է և Ագաթանգեղոսի պատմութիւնը, որից առաջ է բերում մի ընդարձակ հատուած. այս հատուածը շատ հետաքրքրական է այն տեսակէտից, որ Վանանդեցին պէտք է իւր ձեռքին ունենար

Ազաթանգեղոսի այն վերսիան, որից օգտուել է և Մ. Խորենացին, Վերջինս նոյնպէս սուրբ Նունէի մասին խօսելիս Ազաթանգեղոսի վկայութեանն է դիմում. բայց որովհետեւ մեր ձեռքը հասած հայկական Ազաթանգեղոսի մէջ սուրբ Նունէի մասին մի խօսք անգամ չկայ, այսուեղից ևս Խորենացու քննագումները եկրակացրին, որ ծերունի պատմաբանը ճիշտ չէ խօսում. Այս կողմնակի փաստն ևս դարձեալ վերականգնում է մեր պատմահօր ասածների ճշմարտութիւնը.

Պրօֆ. Մառը հետաքրքրական է համարում նաև Թաթուլ, Գիւտ, Թովմա եւ Վարոս նահատակների պատմութեան ձեռագիրը. թէև այս պատմութիւնը տպագրուած է, սակայն ոչ այնպէս լրիւ և նոր փաստերով լի, ինչպիսին որ Երուսաղէմի յատենադարանում գտնուած ձեռագիրը. վերջինիս հեղինակը թէև շատ հին ժամանակներում չէր կարող ապրել բայց անկասկած օգտուել է հնագոյն նիւթերով, որ մեր ձեռքը չեն հասել, Երիտասարդ հայկաբան ն. Աղոնց իւր մի բանախօսութեան մէջ աշխատել է պատցուցանել, որ Ղազար Փարպեցու և Եղիշէի պատմութիւնից առաջ մեր գրականութեան մէջ գյուղութիւն է ունեցել Վարդանանց պատերազմի նկարագրութիւնը. Նրա ենթադրութեամբ եօթերորդ դարի պատմաբան Սերէոսը օգտուել է Վարդանանց պատմութեան այդ հին վերսիայից և ոչ Փարպեցու և Եղիշէի պատմութիւններից. այդ հանդամանքով է բացատրում սա, որ Սերէոսը Վարդանին կարմր է անուանում, իսկ Փարպեցին ու Եղիշէն կարմր անունը չեն գործածում. Այժմ պրօֆ. Մառն աւելացնում է, որ վերոյիշեալ նահատակների պատմութեան մէջ ևս Վարդանանց պատերազմի հերոսը կոչում է կարմիր Վարդան.

Այս համառօտ քաղուածքից արդէն ընթերցողը տեսնում է, թէ ո՞քան վաղ է դեռ մեր հնագոյն գրականական հարցերի մասին վերջնական վճիռներ կայացնելը և այս կամ այն հեղինակաւոր յատենագրին զանազան անվայել ածականներով մկրտելը. Տիմիայն տրամաբանական դատողութիւններով չի կարելի վճռել այդպիսի խնդիրներ, այլ մանրակրկիտ ուսումնասիրութեամբ, համբերութեամբ, տոկուն աշխատասիրութեամբ. Ահա այս շաւզով է ընթանում յարգելի պրօֆ. Մառը և այդ պատճառով էլ ապագայում նրա եղրակացութիւններն աւելի յօտ կլինեն հշամարտութեան.